ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՄԱԳՐՔԵՐԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀԴՈՎՄ

10

ԾԱՆՈՒՑՈՒԹԻՒՆ

1. Կաթողիկէ Սրբազանը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վիճակեայի բաժանորդագիրն է մեկ մեծիս անոնց հաւար որ ի Կ. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարանքներու կամ Առաջնորդարանքներու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու հաւար՝ Զորս (4) ֆրանք է: Հասցէն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծառայն ու ձերը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանք վերջնականապէս պիտի ճշդուին: — Մեկ թիւը՝ մեկ դամեկան է:

2. Սրբազանը կը հրատարակուի Շաբաթ օրերը:

3. Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ ճոխութեամբ հրատարակելու իրեն դրկուած ո՛ եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

7. Ծանուցմանց հաւար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուի:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱԳՐԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Առաջին Տարի | 26 Օգոստոս 1911 | Թիւ 10.

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ԴԻՏՈՂ

«Մէնմուա» թերթը որ օրինաւոր Հովուապետին դէմ մղած ծայրայեղ պայքարին փոթորիկէն տարուելով, չխղճեր ո՛ և է նախատական յօդուած առանց ընտրութեան հիւրընկալել իւր սիւնակներուն մէջ, որ՝ գոհ չըլլալով աշխատելու ժողովուրդը իրենց Կաթողիկոսին դէմ գրգռել զայն իր բնական մակդիրներէն իսկ զրկել, անդուլ անդադար անոր հրաժարումը կամ պաշտօնանկութիւնը փողահարել այլ կ'ողբայ նաև այս ըմբոստական շարժման մէջ Եպիսկոպոսաց ուղիղ (correct) ընթացքը զոր ինքն կ'անուանէ թմրեալ վիճակ տենչալով զանոնք ալ եկեղեցական օրինաւոր իշխանութեան դէմ ապստամբած տեսնել, մինդչեւ անոնք ըստ իրենց նուիրական պարտականութեան մազիւ չափ չեն բաժնուիր անկէ, Մէնմուա՝ վերջերս երկու շարունակեալ առաջնորդող յօդուած տպեց (թ. 4894-5) Դիտող ստորագրութեամբ և «Զայն ոչխարաց առ Հովիւն» խորագրով. և ապա նաև թրքերէնի թարգմանեց զանոնք, որպէս զի մոլորութիւնն և Օրինաւոր Հովուին դէմ նախատինքը որքան հնար է ընդարձակօրէն ծաւալի։

Այս յօդուածը, ճարտարիմաց խօսքերով սեթևեթեալ իմաստակութիւն մըն է, որմէ կրնան խարուիլ պարզամիտները. հետևաբար կ'արժէ որ զինք ծածկող խարդախ քօղը մերկացնենք, ցոյց տալու համար իւր Ցանոսեան կեղծ դէմքը, խաբէպատիր կամ անպիտակից մոլորութիւնները, որոնք այնքան հին են՝ որքան կը բղխին նախկին հերձուածի դեռ չցամքած ակնաղբիւրէն։

Արդէն տիտղոսն ինքնին կը մատնէ դիտումը։ Ս. Եկեղեցւոյ մէջ բնաւ տեսնուած կամ ընդունուած բան չէ որ ոչխարք դառն քրթմնջանաց ձայն բարձրացնեն առ Հովիւն։ Կայ այո՛ Ձայն նաւասացեղոյ առ Փրկիչն, Ձայն ապաշաւանաց, ի խորոց սրտի Ձայն, ևն. սակայն ասոնք ամենքն ալ համազօր են խոնարհ աղերսանքի, անխլիրտ հնազանդութեան, աննիազ յարատևի։ Երբ ոչխարք ձայն բարձրացուցին հովուին դէմ, վարակած էին հոգեսպան ամբարտաւանութեամբ որ Արուսեակը թաւալգլոր սատակեց անդունդներու մէջ. քանզի այս օրինակ ձայնը բողոք է. և օրինաւոր Հովուին դէմ բողոքողներն՝ Բողոքական եղան և հերետիկոս։ Ճշմարիտ ոչխարներ չեն սուզեր և չեն կրնար դատել դատապարտել իրենց Հովիւը։ Քանզի գրուած է Ճշմարտութեան Բանին պատգամն անյեղլի. « Ոչ յԵլ ըէ, ԵՅ ըէ. ԵՈՐ ՉՅԵԼ ԱՆՐԷԷ, ՉԷՈ ԱՆՐԷԷ » (Ղուկ. ԺԸ. 1.)։

Ստորագրութիւնն ալ իւր կեղծութեան մէջ կը խօսի։ Դիտողը քննադատ է վճռող է. համարձակախօս յանդիմանող է Հովուին, և Հովուին՝ երբ յանիծոյ կը վարդապետէ. անոր Հայրապետական — Հովուական թուղթը կը դատափետէ. ուղիղը և սխալը կը մատնանշէ. և այնպէս Դատաւոր և Հովիւ ինքն կը կանգնի։ Բայց Ս. Եկեղեցին այսպիսի յոխորտացող մեծաբան դատաւորներ չընդունիր։ Առաքեալն ըսաւ. « Ասորոդոյ խօսքը, կորոծ չէ »։ — « Թո՛ղ խորշի անէրաորենեն՝ այն ամէն մարդ որ կ'անարանէ դիրոջ անունը »։ — « Ամէն ապէն կը սորվին, — երբեք ճշմարտութեան գիտութիւնը չեն հասնիր։ Այլ ինչպէս որ Յանեան — Յամբրէ հակառակ կեցան Մովսէսի, այնպէս ալ — ան հակառակ կը կենան ճշմարտութեան... անդիրանք ի հաւատս... իրենք մոլորած են և զուրկներ ալ կը մոլորցնեն։ Ե՞ր տես տարոյն Ասորոդոյ խօսքը. հասի՛ր ի վերայ ժամու և տարաժամու » (Բ. Տիմ.)։

Դիտողը որ Ս. Պողոս Առաքելոյն բերանէն կը յիշեցնէ Եպիսկոպոսաց պարտքերը, ընթերցումը կը պարտէր շարունակել, և կարդալ այն տողերն ալ՝ ուր գրուած կայ թէ Եպիսկոպոսը « Կարող պէտք է ըլլայ հակառակորդները կշտամբելու տանելի ըստեր կան անհնազանդք, զրախօսք, մտախնդիք... զոր պէտք է ըմբերանել, կը սորվեցնեն ինչ որ չի արժան.. կշտամբեսցես զանոնք խստագոյնս, որպէս զի

ԱՌՈՂՋԱՆԱՆ է հաստատ.. Այլ դո՛ խօսէ՛ ինչ որ կը վայելէ՛ ողջմիտ վարդապետութիւնդ .. և յիշեցո՛ր անոնց էշխանութիւնց հնազանդ ըլլալ և հպատակ կալ... մի՛ ըստ հայհոյել. անէրիս ինել. հեղը. ամէն խոնարհութիւն առ ամենայն մարդկի ցուցնել» (Թուղթ առ Տիտոս)։ — Առաքելոյն ստուգածաշունչ վարդապետութիւնը չկրնար կիսատ և թերի ըլլալ։

Դիտողը կը սկսի իւր անաչառ դիտողութիւնները։ Բայց նախ պէտք է ըսել որ ինքն այս գործոյս մէջ դերը կը ստանձնէ Ժիւլ Լըմէթրի մը, զ. օ. իբր թէ նիւթ առած ըլլայ գրագիտական կամ թատերական կտորի մը քննադատութիւնը. մի և նոյն սճով և աներկիւղ պատգամախօսութեամբ է որ կը ճառէ կը վիճէ՝ նաև ի հաւատոյս, իւր Հովուապետին հետ և զայն կը դատապարտէ, հաւատարէ առ հաւատար։ Կ'երևի թէ չգիտնալ կը ձևացնէ Ս. Եկեղեցւոյ անտեղիտալի և անդիմակայ վարդապետութիւնը; և կ'ըսէ թէ սորված է ինքը «Կաթողիկէ Եկեղեցւոյ ճշմարտութիւնները, որոնցմէ ոմանք կը տարբերին Ձեր Հովուականի յայտնած դրութիւններեն»։ Ահա վարդապետն ի հաւատոյս, և որ կը խօսի յԱթոռոյ (ex Cathedra). Գոգցես Ս. Օգոստինոս մըն է կամ Շնորհալի Հայրապետ։ Բայց՝ ո՛վ Դիտող, գիտնալու ես որ ճիշդ այդ օրինակ անընդունելի և յանդուգն միջամտութիւնները խափանելու մերժելու համար է որ մեր Հայրապետը կը պայքարի այսօր և պիտի պայքարի վաղը և միշտ, և պիտի պայքարին իւր ամէն յաջորդները ցյաւիտեան, և դու ալ պէտք է գլուխ ծռես, քանի որ կը պարծիս և յուսամք թէ անկեղծօրէն կաթողիկեայ ես։ Ո՛չ դու, ո՛չ դուք, ո՛չ ոչխարքն ամենեքին բնաւ հրբեք իրաւունք չունիք Կաթողիկէ Եկեղեցւոյ ճշմարտութիւնները սորվեցնելու Ձեր Հովուին, անոր սորվեցուցածները քննելու և դատելու և զինքն սրակնաեաղ գտնելու, եթէ մտադրութեամբ կարդացած ըլլայիր կոնդակը, հոն պիտի տեսնէիր Սուրբ Գրիգոր Նազիանզացւոյն սա հրաշալի և պարագայայարմար խօսքերը. «Ոչխարնե՛ր, ձեր հովիւները մի՛ արածէ՛ք, և ոչ ձեր սահմաններէն վեր ելէք, որովհետև ձեզ բաւական է եթէ լաւ արածուիք։ Մի՛ դատիք զդատաւորներն և օրէնսդիրներու օրէնքներ մի՛ տաք» (ճառ 19. թիւ 10.)։ Այս կը վերաբերի մի միայն և արտաքսաբար՝ Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ ընդհանուր Գլխոյն, Հռոմայ Սրբազան Քահանայապետին, կամ Անոր Նախագահութեան ներքև միայն գումարեալ Տիեզերական Ժողովոյ։ Դու որ կը պարծիս սորված ըլլալ «Կաթողիկէ Եկեղեցւոյ ճշմարտութիւնները», այս գլխաւոր և էական ճշմարտութիւնը չես գիտեր և կը գթիս ահեղօրէն և կը գայթակղեցնե՛ս Քրիստոսի փոքրկունքը։ Այս մոլարանուն տրամաբանու-

թեամբ է որ Ս. Եկեղեցւոյ Հովուապետ և Քրիստոսի փոխանորդ Պիոս Ժ. Քահանայապետէն ճանչցուած, ընդունուած և պատուուած մեր Հայրապետը, վարկաբեկ ըրին և հրատարակեցին թէ զինքը չեն ճանչնար։ Բայց ինչպէս որ Քրիստոս Տէրն մեր իւր ոչխարները երկնաւոր Հօրմէն ընդունած էր, այր վասն և կ'ըսէ՝ « Ես և Հայր իմ մի է։ » (Յովհ. Ժ. 29-30), այսպէս մեր Հայրապետն ալ՝ որ Քրիստոսի Փոխանորդէն ընդունած էր իր ոչխարները, կրնայ այսօր ըսել թէ Եկեղեցւոյ Սրբազան Գլխոյն հետ սերտիւ միացած եմ։ Սակայն և այնպէս իր ոչխարներն որ կը պարտէին հնազանդիլ իրեն իբրև Քրիստոսի, կը պարտէին պատուել զինքը՝ ինչպէս զՔրիստոս, նսխատեցին, անլուր թշնամանքներով վարկաբեկեցին, սրբազան Պաշտօնէն վար ձգելու ձեռնարկել ջանացին, խօսեցան, հրատարակեցին, ապստամբական կազմակերպութեամբ. անոնք որ « յեցած էին օրինաց վրայ.. վասն առաջնորդ լինել կարաց ». Բայց՝ « օրէնքը ոտնակոխ ընելով, զԱստուած անարգեցին ». (Հռ. բ.). քանզի ըսած է անաւուտ ճշմարտութիւնն, « Ով որ ձեզ կ'անարգէ, զիս կ'անարգէ »։ Քրիստոսի այս անհաւոր սպառնալիքն առ ոչինչ համարելով, ըմբոստացան օրինաւոր Եկեղեցական Իշխանութեան դէմ իբր դատաւոր կանգնելով պատապարտեցին անոր վարդապետական կոնդակը, և լուտանքներով լի Յայտարարութիւն մը յօրինեցին, տպագրեցին՝ հանդերձ թարգմանութեամբ, և իբրև Շրջաբերական զրկեցին ցրուեցին ամէն տեղ, ի գրգռութիւն ժողովրդեան և ի հրաւէր յապստամբութիւն։ Սակայն հարկ ի վերայ կայր գիտնալ թէ՝ Սրբազան Քահանայապետ մ'ըսած է. « Որոնք որ Եկեղեցւոյ օրինաւոր Մեծերուն... յամառութեամբ կը հակառակին, և անոնց պատուէրները չեն կատարեր, նոյն իսկ անոնց աստիճանն ու պատիւը զլանալով, Կաթողիկէ Եկեղեցին զիրենք միշտ հերձուածող համարած է » (Կոնդ. Quartus, թիւ 12.)։ « Վասն զի Եկեղեցին՝ ինչպէս Հարք կը սորվեցնեն, քահանային հետ կապուած ժողովուրդ մըն է, և հօտ մը՝ հովուին յարած. անոր համար Եպիսկոպոսն է յԵկեղեցւոջ, և Եկեղեցին ալ յԵպիսկոպոսն. և Եպիսկոպոսին հետ չեղողը՝ Եկեղեցւոյ մէջ ալ չէ » (անդ. Ս. Կիպր.)։ « Վասն զի Տէրն մեր չէ թէ միայն ազգաց կամ ժողովրդոց՝ Եկեղեցւոյ վրայ իշխանութիւն չտուաւ, հապա հաւատարիմ պարտք դնելով իրենց վրայ, Առաքելոց յանձնեց որ զիրենք ուսուցանեն։ Ուստի և Երանելին Պետրոս՝ Առաքելոց և Երիցանց ժողովոյն յայտնապէս ըսաւ թէ՝ « Ընդէանոյ Աստուած բերանով իւրով ասել հեթանոսաց բանին առաքելոցն և հաստատել » (անդ, 36. — Գործ. Ժե. 7.)։

Եւ այս սկզբունքը խոտելուդ համար, ո՛վ Դիտող, թոյլ չտուաւ Աս-

ստուած քեզ ալ դիտել ճշմարիտ ճշմարտութիւնը՝ ինչպէս կ'ըսեն Գաղղիացիք, զի գիտնալու ես որ պարտազանց և ամբարտաւան յանդգնութիւնը Աստուած կը պատժէ կուրութեամբ. « Կոյրացուց անոնց աչքերը որպէս զի չտեսնեն (Յովհ. ժբ. 40.)։ Հետևաբար սայթաքեցար ինկար տղայական հակասութեան մէջ՝ Կաթողիկէ Եկեղեցւոյ ճշմարտութիւնները հակադրելով Հովուականի դրութիւններուն զոր այնքան կը կրկնես։ Ի՞նչ կը մտնէ հոս դրութիւն, որ systema ըսել է, և՝ ինչպէս յուսամ գիտես, « փիլիսոփայական յօրինուածութիւն » կը նշանակէ, ընդլայնումով մարդկեղէն ո և է գիտութեան և նոյն իսկ քաղաքականութեան սկզբունքներուն կամ այլ և այլ տեսակէտի եղանակներուն կը յարմարցուի։ Դրութիւնը մարդկային մտաց արդիւնք է. յեղյեղուկ, յարափոփոխ, քմածին և բազում այն է որ ջղայնին տրամադրութեանց իսկ ծնունդ է լոկ։ Հովուական մը սակայն, որ վարդապետական է, չկրնար դրութիւններ բովանդակել, և ընաւ առաջարկել զանոնք հաւատալու համար, այլ դրութիւնները կը դատէ և անուղիղները կը դատապարտէ. և եթէ երբեք անցողաբար դրութեան մը վրայ խօսի, հրամանակարգ վարդապետութեանց իբրեւ հետեւութիւն միայն կը խօսի։ Ընդ հակառակն դու կ'ըսես թէ « Մենք ամենքնիս գիտենք.. թէ ինչպէս պիտի ընդունինք և հաւատանք » ... Բայց գիտենք նաև թէ « Յաթոռն Մովսիսի նստան դպիրքն և փարիսեցիք » .. և կը յարես. « Ոչխարներն իրաւունք կը ստանան իրենց համոզմանց վրայ ամուր կենալու ». այսպէսով խօսքն ու գործը չարաչար կը շփոթես։ Ուրեմն ըսել կ'ուզես որ՝ զՀովիւը և անոր վարդապետութեան ուղղութիւնը դատելու իրաւունքը ոչխարին է. ըսել է՝ հաւատալու դատաւորութիւնը, criterium ը՝ հաւատացողին մտքի արտագրոյթն է, ԵՍ ին ենթակայական պատճառաբանութիւնն է, առնոր համոզումն է. ուրեմն Ս. Եկեղեցւոյ իշխանաւորներուն, Եպիսկոպոսներուն « Զոր դրա՝ Հոգին սուրբ Տեսուչը », որոնց հրամայեց Քրիստոս « Ո՜սոցի՛ + », խոստանալով թէ « Ահա ես յեղի հետ եմ ամէն ժամանակ մինչև աշխարհիս վերջը » (Գործ. ի. 28. — Մատթ. իը. 20), առհասարակ այս իշխանաւորներուն խօսքը չէ որ պիտի վստահացնէ հաւատացողը. բայց պէտք է գիտնայիր որ այս քու դրութիւնդ բազմիցս դատապարտուած է անաթեմայներով, պէտք է գիտնայիր որ բողոքականները՝ որոնցմէ՝ ի վերջ կոյս յօդուածիդ, կը դաւանիս խորշիլ և փախչիլ իբրեւ յօձէ, ճիշդ այդ դրութեամբ են Բողոքական. պէտք է գիտնայիր որ Բողոքականաց այս դրութիւնն է որ ծնունդ տուաւ Քանթի փիլիսոփայական դրութեան և ըստ նմանէ՝ ամէն կերպով աւաղելի և ամէն բարեաց կործանիչ Բանաստաշտութեան. նոյնպէս

այդ դրութեամբ է որ « էջմիածնական եղբարց » եկեղեցին՝ որմէ եւ խորհիլ կը խոստովանիս, ի վարդապետական մասին եւ այսօրուան անյարիր եւ քաղաքական վիճակին հասած է, աւա՛ղ, եւ կործանումն կը սպառնայ մօտալուտ։ Ցիշեցնեմ քեզ Քահանայապետի մը անսխալական խօսքը. « Ժողովրդեան պէտք է սորվեցնել, եւ ոչ թէ անոր ետեւէն երթալ. եւ երբոր չեն գիտեր, մենք հարկ է որ իմացնենք թէ ի՛նչ օրէն է եւ ի՛նչ օրէն չէ, չէ թէ անոնց հաւանինք » (Ս. կեղեստ. առ Եպս.ունս)։ Հետեւաբար համոզուէ՛, ո՛վ Սիրելի որ ճշմարիտ Կաթողիկեայ ես, ինչպէս « Սրբո՛ կը հաւատաս յարդարութի՛ւն և բերանով կը խոստովանիս ի փրկութի՛ւն » (Հռ. ժ. 10.), համոզուէ՛ որ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ ոչխարը չկրնար բնաւ դատել զՀովիւը, ապա թէ ոչ դատած կ'ըլլայ — քա՛ւ ի մէնջ — զՑիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ։

(Շարունակելի) Կաթողիկէ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԻ ԿՆԻՔԻՆ ՆՈՐ ՄԷԿ ՑԱՂԹԱՆԱԿԸ

Վէրտէզի, այլ եւ տխրահռչա՛կ անուն՝ հաւատոյ և պարկեշտութեան մասին...

Վէրտէզի՝ երիտասարդ քահանայ, չարին նորահնար սադրանքներէն՝ Արդիականութեան աղտեղի հոսանքներէն տարուելով. իր մտքին մէջ հաւատքը ու սրտին մէջ բարոյականի ըղձերը սպաննած էր, և 3 ամիս առաջ՝ սքեմ, պատիւ ու խիղճ միանգամայն մերկացաւ, և յարեցաւ յաղանդ բողոքական Մէթոտիստներու։ Այսքան ստորնութեամբ չշտապանալով, ուրացողէ՝ հաճեցնելու համար զինքն հիւրամեծարող աղանդաւորները և իր անուան շուրջ աղմուկ յարուցանելու նպատակաւ, մէկդի դրաւ ամէն զգացում, և ժպրհեցաւ չարաբարոյ թերթերու միջոցաւ անուանարկել զՎերապ. Հ. Պրիքարէլլի՝ Ցիսուսեան վարդապետը, իբրև թէ սա իւր խոստովանանքի գաղտնիքը յայտնած ըլլար։ Վէրտէզի մատնած էր իւր բարեկամներէն մի քանի Արդիապաշտ սքեմաւորներ, և կը պնդէր թէ յիշեալ Հայրը՝ իր խորհրդական խոստովանութենէն իրազեկ, ձեռք տուած էր զանոնք եկեղեցական բարձր իշխանութեան՝ ի պատիժ պատուհասի։ Եւ այս շարժառիթի կը վերագրէր իւր ուրացական դատալքութիւնը։

Հ. Պրիքարէլլի՝ արտօնուելով Սրբ. Քահանայապետէն, օրինաւորապէս դատ բացաւ անամօթ զրպարտչին դէմ Հռոմայ Իտալական դատարա-

նին առջև։ Երկու կողմին երևելի փաստաբաններ դիցան. Ցիսուսեան Հօր համար՝ ի մէջ այլոց, Գարէլլոյ և Տի-Պէնէտէթթօ. Վէրտէզիի համար ի մէջ բազմաց, նաև հռչակաւոր անդամք Պատգամաւորական Ժողովոյ՝ Ալպանօ և Պարձիլլայի։

Բազմաթիւ պատուաւոր վկայք՝ եկեղեցական ու աշխարհական, երդմամբ հաստատեցին Հ. Պրիքարէլլիի անարատ պատուաւորութիւնը, անպարսաւ կենցաղը, ուղղամիտ վերաբերումը, և այլն։

Իսկ Վէրտէզիի զրպարտչի հանգամանքն ու դերը ապացուցուեցաւ՝ 1. — Իր փոփոխական և յեղյեղուկ մտաւորական վիճակէն, որով քանի մը անգամ իւր կոչումն ու կեանքի պայմանը փոխած էր. 2. — Իր յատուկ մեկ նամակն՝ որով ժամանակին գրաւորապէս ամբաստանած էր յիշեալ արդիապաշտները առանց բնաւ կապ ունենալու խոստովանանքի հետ. 3. — Իր բերանացի յայտարարութիւններէն, զորոնք կրկնեցին բազմաթիւ վկայներ։ 4. Դատարանի մէջ՝ իր զրպարտիչ ըլլալը իւր երեսը գարկին նաև իրմէն ամբաստանեալ այն արդիապաշտները. 5. — Որոնք արդէն շատ առաջ ծանօթ էին եկեղեցական ատեաններու. և, և։

Արքայական Դատախազը (le Procureur du Roi) Վէրտէզիի դէմ զարհուրելի պարաւական մը խօսեցաւ, յանդիմանելով ու դատապարտելով վատանուն թշուառականը՝ իւր ներկայութեան իսկ և առաջի խաւռներամ բազմութեան, իբր ապերախտ իւր բարերարին դէմ, դաւադիր մատնիչ իր բարեկամաց, անպատիւ հաւատուրաց, անպարկեշտ ստախօս, անխիղճ զրպարտող, ընկերութեան կեղտ ու նախատինք. և խնդրեց իրեն համար ամենասաստիկ պատիժը։

Դատարանը՝ իւր որակութեամբ ամէն կասկածէ դուրս է. ճշմարտութիւնն ճանչցաւ ու խոստովանեցաւ. և հռչակեց որ խոստովանանքի գաղտնեաց կնիքը անաղարտ մնացած է. հետևաբար Վէրտէզի բախդախընդիր ու սևսիրտ զրպարտիչ մըն է և դատապարտեց զՎէրտէզի տասն ամիս բանտարգելութեան, քառասուն ոսկի տուգանքի, ամէն ծախուց հատուցման։

Վէրտէզի դիմեց վերաքննիչ ատեանի ուր քանի մը օր առաջ լսուելով փաստաբաններն և ընդհանուր դատախազը, կրկին վճռուեցաւ որ նա զրպարտիչ մը եղած է Հ. Պրիքարէլլիի, և տասնամսեայ բանտարգելութեան, տուգանքի և ծախուց հատուցման պատիժները նոյնութեամբ վերահաստատուեցան։

Եւ մինչ կաթողիկէութեան թշնամիք իրենց համար հազուագիւտ այս

առիթը ձեռք առած էին Կրօնքին ամենասուրբ մէկ խորհուրդը ստելի ընելու համար, ահա դարձաւ այն ի գովեստ, ի պարծանս և ի յաղթանակ. և խոստովանանքի գաղտնիքը՝ զոր նոյն իսկ անկրօններ կը դաւանին հրաշալի և աստուածային, այս անգամ ևս տարաւ յաղթութիւնը, աշխարհական ոչ կասկածելի օրինաւոր դատարանի մը առջև, հրապարակաւ և հանդիսաւորապէս։

Երանի՜ թէ վէրտէզիլի և իւր նմանեաց խրա՜տ մ՚ըլլար ուղղութեան։

ԹԵՄԵՐՈՒ ՁԱՑՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Եպիսկոպոս մը կը գրէ. « Ձեր Գերերջ. Տէրութեան անդրանիկ հովուական թուղթն. ստացածնուս պէս ասկէ շուրջ երեք շաբաթ առաջ կիւրակէ օր մը՝ լուռ ու մունջ և հետաքրքրութեամբ մտիկ ընող խուռներամբոխ բազմութեան մը առջև կարդացուեցաւ ամբողջովին, նախընթաց ազդու յառաջաբանութեամբ և միանգամայն վերջաբանութեամբ մը, որուն տպաւորութիւնը մեր ակնկալածէն ալ աւելի եղաւ գրեթէ բոլոր մեր ժողովրդեան վրայ, որուն կրնամ ըսել ամբողջութիւնը մեզի հետ մէկ սիրտ մէկ հոգի է, ինչպէս մենք ամբողջ կղերս մէկ սիրտ և մէկ հոգի ենք իրարու հետ։ Եւ ինչպէս անցեալ երկու կիւրակէներն, այնպէս ալ այսուհետև մի քանի կիւրակէներ յաջորդաբար մեկնութիւններ և բացատրութիւններ պիտի տրուին կոնդակին այլ և այլ կէտերուն վրայ... ինչպէս հոս, նոյնպէս թեմիս բոլոր առաքելութեանց մէջ ալ կարդացուած է Կոնդակն մեր Քահանայից կողմէն՝ միևնոյն տպաւորութիւնը ձգելով ժողովրդեան վրայ։.. Անցեալները Մեհմուայի մէջ կարդացինք յանակնկալս թէ տեղէս հեռագիր մը քաշուած է եղեր, որուն տեղեկութիւն չունի Հասարակութեանս գրեթէ ամբողջութիւնը... Դաշնակցական գործիչներն են որ կը ճգնին Հայ կաթողիկէ Հասարակութիւնը գրգռելու ոտքի հանելու հոգևոր իշխանութեան դէմ. սակայն յաջողութիւն մը չգտնելով բարերախտաբար իրեն գաղափարակից մէկ քանի վարժապետներով և այլածէս ուսուցիչներով միթինկ կը կազմեն, հետերնին ունենալով մեզմէ երկու կամ երեք հոգի որ միայն անուամբ կաթողիկեայ են, և 20-30 տարիներէ ի վեր ոչ խոստովանած և ոչ ալ հաղորդուած են, և կը քաշեն վերոյգրեալ բողոքի հեռագիրն, որուն

դէմ զայրացած է գրեթէ ամբողջ Հասարակութիւնս, և առիթ կը փնտռէ իւր բողոքի ձայնը բարձրացնելու ատենց դէմ մինչև Կ. Պոլիս և Հռովմ, ինչ որ մինչև ցայժմ ըրած պիտի ըլլար եթէ Մեծմուտա ըսուած թերթն հրատարակէր »։

ԲԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Առ Տօգթոր Նագաշեան Էֆենտի

« Բահնիւմա » ի 27 թուոյն մէջ՝ « Սեն տէ ֆենտիի աղնա » վերնագիրն ունեցող յօդուած մը կը հրատարակէ Տօգթ. Նագաշեան էֆէնտին՝ ուր իւր փայլուն գրիչը կը ցուցնէ ձաղկելու համար Ամենապատիւ Թերզեան Կաթողիկոսի միամտութիւնը որ կը յանդգնի նետուիլ ժամանակի անզուսպ ընթացքին առջև զայն կասեցնելու սին յանձնապաստանութեամբ։

Կը նկարագրէ Նորին Ամենապատուութեան ցարդ ունեցած կեանքն համակրութեամբ մը զոր անկեղծ գիտեմք։ Բայց Նորա Կաթողիկոսական Աթոռը բարձրանալէն ի վեր ունեցած ընթացքը կերևի իւր գնահատական կարողութենէն վեր է։

Կը ճանչնայի զքեզ, կը գրէ Նագաշեան էֆէնտին, իբր մի ուսեալ եկեղեցական, մի ուղիղ մարդ, մի ազգասէր հայ և կը յարգէի զքեզ։ Բայց, կը յարէ, քանի հազար ձիու ուժով սլարշաւ ընթացող կառախումբի մ'առջև կանգնելու չափ միամտութիւն ունենալդ չէի գիտեր։

Հարցում մը, Նագաշեան էֆէնտի։ Արդեօք երբէք նկատի առած էք թէ ինչու Թերզեան Եպիսկոպոս մի ուսեալ եկեղեցական, մի ուղիղ մարդ, մի ազգասէր հայ էր։

Այս յատկութիւններն միայն անով կը բացատրուին թէ Թերզեան Կաթողիկոս նկարագրի մարդ եղած է միշտ. որով նա երբէք իւր անձը մոռացած չէ՝ այլ իւր սկզբունքներն, և անոնց համաձայն վարուած է։ Նա իւր քարոզած սկզբանց համար զոհած է ամէն անձնական դիւրութիւն և շահ, միշտ պատրաստ գտնուելով զոհելու նաև իւր անձն՝ քան թէ դրժել իւր սկզբանց. մանաւանդ երբ այս սկզբունքներն՝ ոչ թէ սոսկ մարդկային տեսութիւններէ յառաջ եկած՝ այլ յԱստուածաշունչ հաստատեալ անսխալ եկեղեցւոյ վարդապետութիւններն ըլլան։ Ոչ՝, այն ժամանակ, Թերզեան Կաթողիկոս կը կորսնցնէ այն զգուշաւոր ընթացքը զոր ունի սովորաբար և որ արդիւնք է իւր խոնարհութեան, նա մի առիւծ կը դառ-

նայ. ոչ մի արգելք չէ կարող այլ ևս զինքն կեցնել, առ ոչինչ կը գրէ մահն իսկ, բաւ է թէ ինքն իր պարտքն կատարած ըլլայ։

Այս կերպով միայն կարելի է բացատրել Թէրզեան Կաթողիկոսի կեանքն թէ իւր Եպիսկոպոսութեան տարիներուն, թէ Ատանայի ջարդի միջոցին, թէ իւր կաթողիկոսական Աթոռ բարձրանալէն ի վեր։

Այս կերպով կը բացատրուի համիտեան ըէժիմին ժամանակ նորա կրած հալածանքներն որ տարիներ զինքն հեռացուցին իւր հօտէն՝ կրծանելով և կամ վտանգելով իւր ամենէն աւելի սիրած ձեռնարկներն. փոքր զիջում մը բաւ էր այդ հալածանքն դադրեցնելու, բայց այդ զիջումն իւր հօտին կեղեքումն պիտի ըլլար և իւր խղճին դէմ էր։

Ատանայի արհաւիրքի օրերուն՝ երբ հայ ժողովուրդն կը գիշատուէր և կատարուած խժդժութեանց առջև ամենէն քաջերն անգամ սարսափած իրենց անձը փրկելու միջոցն կը փնտռէին, ինքն դաղտներուն առջև խոյացաւ իւր ետին գտնուողներն փրկելու համար, զի այդ էր իւր խղճին ձայնը։

Այսօր ևս եթէ ոտնակոխ կընէ իւր հաւատակութեան մի մասին համակրանքն. պատճառն այն է թէ այդ համակրանքն պահելու համար զոհել հարկ է մի եկեղեցական սկզբունք, և իւր խիղճն չներեր։

Գալով ժամանակին ընթացքն կեցնելու համար անոր կրակ կտրած անիւներուն տակ նետուելով կտոր կտոր ըլլալու վտանգին՝ Նագաշեան էֆէնտի, փոխանակ Վաթիգանի շղթաներու, կրակներու, բանակներու, կապանքներու և այլ չարչարանքներու երևակայածին նկարագրութիւնը ընելու, թող մի քիչ նկատի առնէ Եկեղեցական պատմութեան ամփոփումը։

Կռապաշտութիւնը, այս է մարդկային կրից համատարած գերիշխանութիւնը կը վարէ տիեզերքը։ Տաներկու անուս ձկնորսներ կելլեն այդ կռապաշտութիւնը տապալելու։ Բայց միամիտներն, ձեռքերնին ուրիշ զէնք չունին եթէ ոչ խաչեցելոյն նշանը, արհամարհանաց առարկայ կըլլան, բայց կուռքերն կսկսին իյնալ իրենց պատուանդաններէն։

Սարսափած՝ կռապաշտութիւնը որ ժամանակին ընթացքն է, իւր օգնութեան կը կոչէ կայսրներու իշխանութիւնն։ Առաքելոց աշակերտներն կը կռուին՝ վզերնին անոնց սուրին ենթարկելով միայն. միլիոնաւոր մարտիրոսներ այդ մարդկային կրից սուրընթաց կառախումբին արիւն ժայթքեցնող անիւներու տակ միամտորեն կեանքերնին կը զոհեն. բայց թէ կռապաշտութեան և թէ հռովմէական անյաղթ կայսրութեան աւերակներու վրայ կը կանգնի կաթուղիկէ Եկեղեցին։

Ժամանակին ընթացքն կը շարունակէ. մարդկային կիրքերն Եկեղեցւոյ առջև նորանոր արգելքներ կը դնեն. ամէն կողմանէ հերձուածներ, հերետիկոսութիւններ կը վխտան, շատ անգամ նեցուկ ունենալով թագաւորներու իշխանութիւնն և բանակներու ոյժն։ Ասոնց հարուածներուն դէմ Եկեղեցին ուրիշ զէնք չունի եթէ ոչ Սրբազան Քահանայապետներու տկար մատներուն վճռագրերն։ Այդ հերովսիապետաց անուններն անգամ այսօր մոռցուած են, կաթուղիկէ Եկեղեցին կանգուն կայ։

Ժամանակին ընթացքն շարունակեց. մարդկային կիրքերն Եկեղեցւոյ դէմ աւելի ահարկու թշնամի մը հանեցին։ Եկեղեցին գոգցես կործանման կէտին հասաւ. ապականութիւնը սրբավայրին մէջ իսկ մուտք գործեց։ Լուտեր բարեկարգութիւն հրատարակեց, ժամանակին ընթացքին յարմարելով այսինքն ապականութիւնն իսկ օրինաւոր հռչակելով և ինքն տալով օրինակն։ Բայց Քրիստոսի Եկեղեցին իւր պաշտօնէից ապականութեան մէջ իսկ սկզբունքներն անխախտ պահելով՝ յաղթող հանդիսացաւ այս ահաւոր հարուածին դէմ ալ.

Բողոքականութեան ծնունդ եղող մոլար փիլիսոփայութեան և անաստուածութեան դարն ևս անցնելու վրայ է. և Եկեղեցին անսասան մնաց իր վարդապետութեան մէջ։

Ժամանակին ընթացքն, այսինքն մարդկային կիրքերն չկրնալով Քրիստոսի Եկեղեցին ոչնչացնել, այժմ կը փորձեն զայն գոնէ իրենց գերի ընել։ Ահա այս պատերազմն է որ կը մղուի եկեղեցւոյ դէմ, անցեալ դարէն ըսկըսեալ, աշխարհականացում անուան տակ։ Առաջին հարուածն Եկեղեցւոյ Գլխոյն ուղղուեցաւ. Նա գերի ըլլալէ աւելի նախադասեց բանտարկեալ մնալ։ Աշխարհականացման պայքարն Եւրոպայի ամէն կողմն կը մղուի։ Մեր հասարակութեան մէջէն ևս ամենք կուզեն մասնակցիլ այդ պայքարին. լաւ. բայց ամենք գիտեն թէ իրենց դէմ պիտի ունենան ամէն ուսեալ ու նկարագրի և սկզբունքի տէր եկեղեցականները։

Արդ, Նագաշեան էֆէնտին, իրր Թերզեան Կաթողիկոսի մի անկեղծ բարեկամն, պիտի ուզէր արդեօք որ նա փոխանակ Եկեղեցւոյ անսասան սկզբանց համար ինք զինքն զոհելու, իւր գիրքը պահելու համար ստորնանար յարմարելու մարդկային կրից, իւր բառովն ժամանակին ընթացքին։ Արդեօք պիտի կարենա՞ր այն ժամանակ զինքն ճանչնալ իրր մի ուսեալ եկեղեցական, մի ուղիղ մարդ։

Բայց Նագաշեան էֆէնտին չեմ մեղադրեր, ահա թէ ինչու։

Վիրաբուժութեան նախնական սկզբանց իսկ անտեղեակ ըլլալով

հանդերձ, եթէ համարձակէի իւր վիրաբուժական գործողութեանց միջոցին իրեն դիտողութիւններ ընել, յայտնի է Նագաշեան էֆէնտին վրայ խնդալով կը գոհանար։

Նոյնպէս ներկայ խնդրոյն մէջ Նագաշեան էֆէնտին անտեղեակ կաթողիկէ Եկեղեցւոյ սկզբանց՝ չէ կարող գնահատել Թերզեան կաթողիկոսի ներկայ պարագաներուն մէջ ունեցած ընթացքը։ Ապահով թող ըլլայ թէ ինչպէս որ Ատանայի արիւններէն և գնտակներէն ազատեցաւ աւելի առողջ աւելի մաքուր, աւելի հրապուրիչ նայնը պիտի ըլլայ նաև այս խնդրոյն մէջ. հոգ չէ թէ անձնապէս գոհողութիւններ կրէ զի այդ գոհողութիւններն են որ զինքը պիտի բարձրացնեն։

Վերջին դիտողութիւն մը սակայն։ Նագաշեան էֆէնտին՝ Ամենապատիւ Թերզեան կաթողիկոսի ընթացքը կը բաղդատէ Համիտի պէս անձի մը հետ։ Ցաւալի չէ՞ միթէ որ իրեն պէս լուսամիտ մարդ մը և համակրանք ունեցող անձ մը չէ կարողացած տարբերութիւն մը գտնել հազարաւորներու արիւնով ներկուած գազանի մը՝ և անոր ճիրաններէն զոհեր կորզելու համար ինքզինքն նուիրով Հովիւի միջև։

Ատանա 12 Յուլիս 1911 Գ. Վ. Հ.

Փ. Պիանիի
Տնօրէն Պատասխանատու



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատասխան առ դիտող . . . . . » 107
Խոստովանանքի կնիքին նոր մեկ յաղթանակը . . . . . » 112
Թեմերու Զայնակցութիւն Կաթողիկոսական Տրամադրութեանց . . . » 114
Քանի մը խօսք առ տգիտ Նագաշեան էֆենտի . . . . . » 115

Այն ամէն պատուական անձանց որոնք հաճեցան շնորհաւորութեան, քաջալերի եւ յարատեւութեան թղթեր ղրկել մեզ, առանձինն կը մատուցանենք մեր շնորհակալութիւնները, եւ մեր կողմանէ կը խնդրենք իրենց բարեացակամ աջակցութիւնը: Կարողիկէ Արձագանգն այնչափ աւելի պիտի զարգանայ եւ օր ըստ օր զօրակարագոյն պիտի հանդիսանայ Հասարակութեանս. որչափ աւելի հանդիպի նիւթական եւ բարոյական ձեռնտուութեան եւ գրաւոր բաժնին եւս մասնակցութեան: